

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
# ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Սիրեցեալ զաւակունք Հայոց Սուրբ Եկեղեցւոյ և որդիք Հայկազնեայք.

Սուրբ Յարութեան տօնի յաջորդող Մեռելոցի օրն է այսօր: Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սրբադրոշմ վեհավայրից ենք ուղղում Մեր խօսքը հայ ժողովրդի բոլոր զաւակներիդ ուր էլ լինէք, Մայր Հայրենիքում, Արցախում կամ արտասահմանում:

Երէկ Զատիկ էր. գերազանց ցնծութեան օր, մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի Յարութեամբը մահուան վրայ տարուած յաղթանակի պատճառած հոգեկան բերկրանքովը զեղուն:

Յառաջիկայ երկուշաբթի Ապրիլ 24 է. 1915 թուի Ապրիլեան եղեռնի մեր նահատակների յիշատակի ոգեկոչման և պանծացման օր: Այս տարի մանաւանդ, Մեծ եղեռնի 80-ամեակի հանգրուանի առաջ ենք կանգնած, ինչ որ իւրայատուկ և բացառիկ նշանակութիւն ունի մեր վերաբերմունքի համար հանդէպ հայութեան դէմ գործուած ցեղասպանութեան և նրան զոհ գնացած մեր անմոռանալի և անմահ նահատակներին, առաւել քան մէկ և կէս միլիոն զոհերին:

Այս բոլորի միջից ի յայտ եկող և մեր մտասևեռումի առարկայ դառնալիք երևոյթը կեանքի և մահուան իրաղութիւնն է: Ապրիլեան եղեռնի օրերին Օսմանեան կայսրութեան ժառանգորդ Իթթիհատական Թուրքիան մահուան սև ուրուականը փորձեց տարածել ողջ հայութեան վրայ, մեր Հայաստան աշխարհից ի սպառ արմատախիլ անելու համար մեր ժողովրդին և վերջակէտ դնելու հայ ազգի գոյութեան: Ցեղասպանութեան առաջին ոճրային արարքն էր, որ այսպէս կատարում էր քսաներորդ դարի սկզբին ողջ մարդկութեան կեանքում:

Շատեր, անհատներ, ազգեր և պետութիւններ, խորհեցին որ հայութեան բնաջնջումը իրականացել էր և գերեզմանի քարը դրուել՝ հայ ժողովրդի գոյութեան վրայ:

Բայց յարութեան զօրութիւնը մի անգամ ևս վերյայտնուեց. մահասփիւռ ջարդերից դուրս եկաւ մեր ազգը ու նոր կեանքով սկսեց տրոփել նրա սիրտը: Համաշխարհային Առաջին պատերազմի աւարտին 1918 թուին Սարտարապատեան հերոսական ոգով տարուած գոյապայքարը պսակուեց Հայաստանի մի կարևոր մասի ազատագրումովը և Անկախ Հանրապետութեան հռչակումովը Մայիսի 28-ին:

Ճիշդ է, որ կարճ տևեց այդ անկախութիւնը: Խեղդուեց հայութեան ազատութիւնը: Բայց ազատութեան և անկախութեան, ազգային ինքնիշխան գոյութեան կամքը մնաց տոկուն և առողջ: Եվ ահա եօթանասուն տարիներ յետոյ, երբ միջազգային դէպքերն և կացութիւնները տարբեր ընթացք ունեցան, այդ կամքը վերստին պոռթկաց մեր Մայր Հայրենիքում այս անգամ Ղարաբաղեան ազատատենչ շնչով, և պսակուեց Հայաստանի անկախ Հանրապետութեան հռչակումով ու եռագոյն դրօշի վերստին ծածանումով 1991 թուի Սեպտեմբերի 21-ին:

Արտասահմանում ապրող հայութիւնը իր ազգային-եկեղեցական կեանքով, իր կրթական ու մշակութային օճախներով և իր ազգային քաղաքական կազմակերպութիւններով 1915-ի ցեղասպանութիւնից դուրս եկաւ վերապրումի և հայկական ազգային ինքնութեան պահպանումի յարատևողական սխրալի ջանքերով, միշտ ինք իրեն հաղորդ պահելով Հայաստանի ժողովրդին հետ և հայ ազգի իրաւունքների ձայնը մշտաբարբառ հնչեցնելով ողջ աշխարհում:

* * *

Ներկայումս մենք գտնուում ենք նոր, յուսալից և նպատակասլաց իրադրութեան առջև: Ամենէն մեծ, կենտրոնական, անկիւնադարձային նշանակութիւն ունեցող իրականութիւնը մեր Մայր Հայրենիքի անկախ Հանրապետութիւնն է, որի հռչակման, ամրացման և զօրացման համար անգնահատելի զոհողութիւններ են մատուցուել և մատուցւում հայրենի նորակազմ պետութեան և մեր ժողովրդի զաւակների կողմից, անխտիր: Կերպարանափոխուում է մեր կեանքը թէ՛ հայրենիքում և թէ՛ արտասահմանում:

Ապրիլեան եղեռնի 80-ամեակը մեզ առաջնորդում է դէպի մի հիմնական գաղափարական, որի իրականացումը մեր կեանքում մեր բոլորի սրբազան պարտքն է: Այդ հրամայականն ու իտէալը մեր կեանքով ու աշխատանքով արտայայտելի միութիւնն է ու միասնական գործելակերպը: Մեր զօրութեան աղբիւրն է այս, մեր բոլորի նշանաբանը, լինի դա Եկեղեցում, լինի հայրենիքում, լինի արտասահմանում: Ժամն է համատեղման: Պահն է ներդաշնակ գործունէութեան մէկ Եկեղեցի, մէկ հայրենիք, մէկ պետութիւն կարգախօսի ներքև:

Սիրելիք, Ապրիլեան եղեռնի ցեղասպանութեան օրերին մեր թշնամին ո՛չ մի զատորոշում չդրեց մեր ժողովրդի զաւակների միջև: Ո՛չ դաւանաբանական, ո՛չ գաղափարաբանական և ո՛չ դասակարգային խտրութիւն դրուեց մահուան գործադրման մէջ: Մահը միացրեց բոլոր հայերին: Այժմ ժամանակն է որ կեանքը մեզ միացնի Հայկեան յարութեան այս նոր առաւօտին:

Այդ միութեան զօրութեամբ է որ մենք կարող կը լինենք մեր ազգի դէմ գործուած ցեղասպանութեան անարդարութիւնը ճանաչել տալ ողջ աշ-

խարհին և արդարութեան մեր իրաւունքը, որպէս սուրբ կտակ մեր նահատակներին, ընդունել տալ բոլոր ազգերին:

* * *

Ապրիլեան եղեռնի մեր նահատակները իրենց ողջ գոյութեամբը հաւատացին և հետևեցին այն ճշմարտութեան որ Քրիստոս Իր կեանքով և խօսքով փոխանցեց ողջ մարդկութեանը. «Մի՛ երկնչիք յայնցանէ որք սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել» (ՄԱՏԹ. Ժ 28): Ոգին է կենդանարար: Ներկայումս մենք կոչուած ենք այդ ոգին պահելու առողջ և գործօն՝ մեր ողջ կեանքում: Այդ ոգին ուրիշ միջոց չունի ինք իրեն արտայայտելու, բայց միայն միացեա՛լ ջանքերով և զոհաբերակա՛ն գործնական եղանակներով: Հայրենասիրութեան փորձաքարը հայրենաշինութիւնն է:

Լսեցէ՛ք այս ձայնը Ս. Էջմիածնից, ձեր բոլորի Մայր եղող Աթոռից: Այստեղ շինուեց «լուսոյ խորանը», «այստեղից ծագեց մեզ համար լոյսը ի Հայաստան աշխարհի»: Այդ լոյսը մէկ է մեզ համար ուր էլ մենք լինենք:

Մեր Եկեղեցու Նուիրապետական բոլոր Աթոռներով, Հայաստանում և արտաշխարհում տարածուած բոլոր եկեղեցական թեմերով և ազգային, քաղաքական և այլ կարգի կազմակերպութիւններով բոլորուենք մեր Անկախ Հանրապետութեան շուրջ, որպէսզի առաւել ևս ուժգնութեամբ ապրենք յարութեան նորաբոյր շունչը մեր ողջ ազգի կեանքում, որպէսզի, առաւել հարազատութեամբ զգանք նահատակների անմեռ, կենսատու և միազանգիչ ոգին վասն փառաց Աստուծոյ, վասն ծառայութեան հանուր մարդկութեան և վասն յաւերժութեան ազգիս հայոց. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,
17 Ապրիլ 1995